

այլ շուտով խափանուած էր սուրբ կրօնքն, մինչեւ մեր Լուսաւորիչն Գրիգորիոս անոնց ալ կրկին լուսատու եղաւ, և իր համանուն թողը անոնց առաջին կաթողիկոս դրաւ, յետոյ մեր ուսմանց լուսատու կամ դպրութեանց հայր Ս. Մեսրովպն՝ նոյնպէս եղաւ անոնց ալ, զրեւր ստեղծելով, թարգմանութիւն ընելով Ս. գրոց, և ալխազուր լեզունին կանոնաւորելով ըստ կարելոյն: Այն ատեններն մեր ազգային տէրութիւնն տկարացած և վերջի շունչն հասած էր. իսկ Աղուանք՝ իրենցմէ աւելի հիւսիսային և հեթանոս Կովկասաբնականներէն նեղուած՝ իրենց լեռներէն իջնելով անցեր էին զԿուր գետ, և Հայոց Ուտի, Փայտակարան և Արցախ նահանգաց՝ քիչ շատ տիրած, որոց վրայ իշխեցին նա և յետագայ դարուց մէջ՝ իրենց այլ և այլ իշխանական հարստութեամբք, մինչեւ զրեթէ յԹԲ և ԹՊ դար. և բոլոր այս իշխանութեան այն հին հայկական նահանգներն՝ կոչուեցան Աղուանք կամ աշխարհ Աղուանից, փոխանակ լեռնային և Կովկասեան աշխարհին, ուր Քրիստոսի դալատենէն դարերով առաջ ալ հին Աղուանք թագաւորութիւն ունէին: Ե. Զ. է. դարերն են նոր Աղուանից ծաղկած և վայելուչ ժամանակն, որոց վերջերը մեր հեղինակն՝ ականատես մեծամեծ քաղաքական զիպուածոց և իր գիւցազնացուցեալ Ջուանչըր իշխանապետին, շարժեցաւ զրելու իր ազգին պատմութիւնը, թէ և ճշգրտի ըսելով այն ատեն Աղուանք կոչեցելոց մեծ մասն չայք էին, և հայերէն կատարուէին կրօնական և քաղաքական մեծ պաշտամունքն. իսկ Աղուան լեզուն երթալով կը նուագէր, թէ և ինչուան հիմայ կը լսուի քանի մը տեղ՝ Կուր գետոյն երկու կողմն ալ, և Ուտիք կամ Ուտէացոց լեզու կ'ըսուի: Ս. Մեսրովպայ քարոզութիւնը յիշող հեղինակաց անուանեալ Գարգարացոց, Գարդմանաց, Ուտէացոց և Աղուանից լեզուքն՝ ամէնն ալ նոյն կը սեպուին, և հիմկու մնացորդէն անտարակոյս կ'ըլլայ՝ որ անոնց վկայածին համեմատ՝ խեցրեկ, կոկորդախօս, ալխազուր լեզու մ'էր, և անարժան կիրթ մտաց գործածութեան: Այս պատճառներով զրեթէ հարկ էր, որ Կաղականաուացին ալ իր պատմութիւնը հայերէն գրէր. ինքն իսկ ազգաւ հայ էր՝ Ուտէցի ըլլալովն. իսկ Ուտիք և մերձա-